

Գ. էջ 77): Բարձրբերդցի Վարդան վարդապետ Ս. Գեղարդի մասին գրած է պարականոն շարական մը վեց տունով, «Իսկ դու պարծանքդ պարծանաց» ըսկզբնաւորութեամբ (անդ, էջ 78-79):

9. Յիսուսի ոսկերուն հետքերը Գողգոթայի մէջ. — Ուղեգիր Փէլիքոս Ֆապրի 1484ին կը գրէ: «Գողգոթայի բակին մէջ մարմարէ յատակին վրայ ցոյց կը տրուէր այն սուրբ տեղը, ուր մեր Տէրը երբ խաչափայտը կը կրէր, Գողգոթայի ժայռին ի տես, խաչը շալակը գետին կ'իջնար անձկութեան մէջ: Բազմիցս համբուրեցինք այս շատ նուիրական տեղը եւ շատ արցունքներով թրջեցինք անոր արիւնով ներկուած հետքերը: Յիսուսի ոտքին այս հետքերը երկրորդ անգամ է որ կը տեսնէինք: Պէտք է մտածել թէ հոգեւոր նշանակութիւն մը պէտք է տանք թէ առաջին անգամ մեր տեսածը Քրիստոսի ոտքերն են փառաց մէջ, և երկրորդը՝ իր մարմնոյն հետքերը՝ երբ ձուլուեցաւ և խաչն ի շալակ հասաւ Գողգոթա» (P. T. S. հատ. է. էջ 285):

Օտար ուղեգիրներ կը գրեն թէ Ս. Յարութեան Տաճարին մօտ գտնուած է խաչով զարգարուած քար մը՝ որ ըստ աւանդութեան, ցոյց կուտար այն տեղը ուր Գողգոթայի մօտ ինկաւ մեր Տէրը խաչը շալակին (Bar. Gd. էջ 109): Իսկ Նիկողայոս Եպոս. Ակուրմանցի «Երուսաղէմի Տնօրինական Ս. Տեղիք» գրուածքին մէջ 1483ին կը գրէ. «Նա է Գողգոթա և տեղի կառափելոյ՝ ուր զՏէրն խաչեցին, և վիճակն որ յերկուս հերձաւ»:

10. — Ժողովրդային աւանդութիւն մը. — Նախապէս յիշեցինք թէ (էջ 48 հատ. 2) աւանդութեան մը